

մար բաւական չէ լեզուական վերլուծութիւնը. պէտք է բառի բուն իմաստի պատմական աղբիւրները գտնել: Անցնենք ինդրի այդ կողմի քննութեան:

Խսկապէս եթէ լաւ մտածենք՝ անհեթեթ եւ անիմաստ կը թուան հայրածին, հօրածին, հարազատ (իբր հայրածին) բառերը, որ նոյն իմաստն ունին եւ նշանակում են հօր ծնած: Ի՞նչպէս թէ հօր ծնած. միթէ հայրը կարող է ծնել: Հայի լեզուական մտածումը կարծում է, որ կարող է ծնել, ուստի հօրն ու մօրը ասում է ծնողներ, թէեւ խսկապէս մայրն է, որ ծնում է եւ ուստի իրաւամբ կոչում է ծնող: Բայց այս մտածումը հայկական չէ, այլ մարդկային: Այս հանգամանքը մատնանշում է ընտանիքի զարգացման մի որոշ շրջան, որից պէտք է որ անցած լինենք սաեւ մենք, քանի ունինք հարազատ բառը:

Խառնակեցութեան շրջանում յայտնի չէր զաւակի հայրը. միակ անկասկածելի ծնողը մայրն էր, ուստի ձիւղագրութիւնը գնում էր մայրական գծով: Մեր իմացած ընտանիքը չկար:

Կային մայրեր եւ զաւակներ: Այդ շրջանը բախումէն անուանում է մայրիշխանութիւն: Այնուհետեւ տիրական դարձաւ հանրային մի ուրիշ կարգ, որ շարունակում է մինչեւ այսօր եւ կոչում է հայրիշխանութիւն: ձիւղագրութիւնը գնում է հայրական գծով. հայրը համարում է ծնող: Հին կարդից նորին անցնելու ընթացքին՝ ենթագրում են թէ համատարած ծաւալը ունեցել մի սովորութիւն կամ ծէս, որ կոչում է կուկալա եւ որ մինչեւ այսօր պահուած է տեղ-տեղ: Երկունքի ցաւով՝ բռնուած կնոջ մօտ այր մարդը գալարում եւ ճիշ ու հառաջ է հանում՝ ձեւացնելով թէ ինքն եւս մասնակից է ծննդկանից աւերին, ինքն եւս ծնում է զաւակը: Պրանով նա հաստատում է իր հայր գանձակի վրայ. դրանով նա բութեան իրաւունքը զաւակի վրայ. դրանով նա ընդունում է, որ ծնող երեխան իրանից է, իր զաւակն է, «հայրածին», և, «հարազատ» է: Այս է սովորութիւնը կամ ծէսը: Մրանով՝ բնախօսապէս ծնելու անկարող տղամարդը դառնում է ծնող: Ինչ որ լեզուաբանորէն եւ բնախօսօրէն մտածելով թւում է անհեթեթ, ընկերային գիտութեան լուսով գառնում է միանգամայն հասկանալի: Հայրը ծնող է, այո՛, բայց ծիսապէս նա ծնող է այն սովորոյթի հետեւանքով, որով հաստատած է իր հայրութիւնը, որով ծնածին համարած է իր զաւակը, իր զարմը: Այս թէ ինչու հարազատը համարեցինք շատ հին բառ:

Ժամանակի ընթացքին հարազատ բառն ստացած է իմաստաբանական զարգացում: Բոլոր շեղ իմաստները բուն իմաստի ձիւղաւորում ներն են: Միեւնոյն ծնողների զաւակները համարում են հարազատ քոյր ու եղբայր: Բառի այս առումը դեռ եւս բուն իմաստի սահմանի մէջ է. քոյր ու եղբայր «հարազատ» են, քանի որ նոյն հօր «ծնածներն» են: Բայց ասում են հարազատ ընտանիք. այստեղ «հարազատ» բառի նշանակութիւնը մասամբ դուրս է եկած բառի բուն իմաստի սահմանից, քանի որ ամուսնու համար միմիայն զաւակները կարող են «հարազատ» լինել, բայց ոչ կինը: Հարազատ քոյրեղբայրները միաժամանակ եւ մտերիմ են. կացութեան այս կողմն առնելով՝ ասում են «հարազատ ընկեր», որ նշանակում է անկեղծ եւ մտերիմ եւ որ բառի հին առումով անիմաստ բացատրութիւն է: Բուն իմաստի շեղումները տանում են մինչեւ «հարազատ մտեր», «հարազատ օրինակ», եւ այս կարգի ուրիշ ասութիւններ, որոնց իմաստը նոյն է «իսկական» բառի հետ:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ



## ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

### ՃՈՐՈԽԻ ԸՒԾՎԱՆՔ

առ = առուակ: — լ = լեռ: — լշ = լեռնաշնթայ:

(Ծարունակակութիւնն:)

Ե.

Կիսկիմ կամ կիցկա:

Կիսկիմ դաւան սկսում է երկու Հունտ-Հնուտ գեղերի առների ձորերից, երկարում է 40 կիլոմետր եւ վերջանում է Պալիսար վասակի խառնումքի, Սակուտ եւ Ամդէտ առների ձորերի մօտ: Այս հովիտը ձորուի կենդրոնական մասն է կազմում, համեմատաբար ընդարձակ դաշտեր, սարահարթեր եւ ծայրէ ծայր մշակուած աղարակներ եւ հանգեր ունի, որոնք ոռոգուած են եղել մի ժամանակ ամբողջական, իսկ այժմ տեղ տեղ քանի որ ըլանցքները վերջին ժերդ եւ ժամանակակից կործանուել եւ այլ եւս

չեն վերանորոգուել։ Կիսկիմ անունը առաջին անգամ յիշում է Աստուրա-Ռւարդական շրջանների սկզբներում եւ շարունակում է գոյութիւնը մինչեւ այսօր։ Կիցկան եղել է արքայական, Մալխասեան, Պարթեւ-Պահաւական, Ամատունի, Սլկունի եւ ուրիշ շատ նախարարութիւնների Ուտանն-ամրոց, բերդ եւ գանձարան<sup>1</sup>. այս գաւառն եղել է պատսպարան եւ նեղուածները այստեղ կամ աւելի խորը-Պահաւական, Պարթեւական, Մամիկոննեան կալուածներում են ապաստան գտել միջին դարերում, երբ հալածուել են Արշակունի, Սասաննան, Բիւղանդական կամ Արարական իշխանակալ բոնաւորներից<sup>2</sup>։

Կիսկիմի սահմաններն են. արեւմուտքից՝ Սպերի հովիտը, հարաւակից՝ Թորդում եւ Օլժի գաւառները, արեւմուտքից՝ Պալխար գաւառը եւ հիսիսից՝ Համշէնը կամ հին աշխարհի Խաղգիքը։ Կիսկիմի եւ Թորդում-Օլժի գաւառների ջրաժամ գիծը կազմում են Խախամին, Եկեղեց (Աղաջ-Քիլիսէ), Մեղրեր, Հարկեւոր եւ Աշմուշէնի լեռները հիսիսից Պարխար լշ-ն։ Կիցկիմի գաւառում Ճորոխին են թափւում հետեւեալ առ-ները. հիսիսից՝ Պալխար լշ-ից դէպի հարաւ են իջում, ձախից խառնում Ճորոխին՝ Խոտորդուր (Խոտոջուր) իր եօթը թաղերով, առուներով՝ Արեգի, Գիսակ, Գողանց թաղ, Կրման, Սունենց, Ճիճապաղ, Միջին-թաղ, Խանքանը-ածոր, Կուղաշէն, Մոխրկուտ Վ. եւ Ս. Գեղուտ, Նիխախ<sup>3</sup>, Կարմրիկ, Ծետկոնց, Կաղմիխուտ, Նիխախ-բերդ, Գարմիջ կիրն, Օշնակ-բերդ<sup>4</sup>, Ճալա, Խծածոր,

<sup>1</sup> Սեպ. արձանագ. Սանդալքեանի, Վիեննա, 1901 թ. եւ ուրիշ աեղեր։

<sup>2</sup> Խորհնացի, Փարակեցի, Ասողիկ, Դրասխանակերոցի եւ ուրիշները։

<sup>3</sup> Կիխախ մի քանի հատ կան կիսկիմի գաւառում, նոյն եւ կրկնում է Սպերի եւ Թորդում լուսանում։ Յայտնի է նոյնական Թորդում խախ կամ Խաղ. Խախու գեղերը, հօչակաւոր տաճարը իր մեծութեամբ եւ ճարտարապետութեամբ։ Ընդհանրապէս ժողովրդի արտասանութեան մէջ խաղ եւ շատ հաւանական է, որ խաղի առածուածնեան անունի շարունակութիւնն է, որ մացել է ժողովրդի բերանում, նոյն իսկ խաղուդ էլ են անուանում է South Hampton տպուած քարաեզի վրայ խախը խախուդի նշանակուած։

<sup>4</sup> Օշնակ բերդը իր հւշակաւոր տմրոցներով, գիշեակներով եւ կործանուած տաճարներով վկայում է իր տարեւր պատմական անցեալը, երբ նա իշխել է բերդին եւ երկրին։ Բերդը լինուած է Ճորոխի ափին, Բեղչին լինուերի վերջին շերտերի գլխին, որն հակում է ճորին գեղի արեւելք եւ գեպի արեւ մուաք։ Կարնոյ գաշտի Օձունը, Լոռու Օձունը, Էջմաննի Օշականը, նոյն խակ Սպերի եւ բարանոսի Օձուն, Օձաել, Օշք, Օշկանձոր անունները ցոյց

ինգեմեկ, Զամբերքանի, Մարաշ<sup>1</sup>, իրիս-բերդ<sup>2</sup>, Փէտէգրէկ, Սակուտ եւ Դորդիլիկ-այիլ<sup>3</sup>, առ-ները, որոնք բոլորն էլ անցնում են համանուն գեղերի մօտից, ոռոգում են հանդերը, ախոռները, մացրաները, եայլաները, վանքերն ու ամբոցները։ Այս առուակների հակառակ կողմից՝ աջից խառնում են Ճորոխին կուղաշէն, Կարմրիկ, Քարամէնիք, Նիխախ-ազ, Զարկոնց, Օշնակ, Ղազերինս կամ Կազերինս, Կեանգնիս, Լէմս, Կիսկիմ, Կիսկիմ-բերդ<sup>4</sup>, Կոչէք-ամբոց, Ճարշիշ<sup>5</sup> (Կրսիս), Փէշկով, Զիլիի, Գիլնար, Լազուգետ եւ Ամգիտ, որոնք հա-

են տալիս Օձերի (Վիշապազանց) պաշտամունքի լոջանը. երբ Ծակների մէջ, ճահճճների շուրջ Վիշապական արձաններ էին կանգնեցնում։ Այս բերդը ջրաբաշխ կամ ջրակետ պաշտօնէի եւ իշխանի ամրոց լինելը եւ նրա իշխանութեան տարածման վկայարանն է։

<sup>1</sup> Մարաշ անունը յիշեցնում է հին Մարաշ (Մարկալ) Հիսուսերի (Ճաթթերի), Կոմինագէնի եւ Կիլիկիայի մէջ։ Սա իր աւերակներով եւ անցեալով ցոյց է տալիս, որ իրն եւ Մարաշի փայլուն շրջանում նրա զուգակից, առուանակից եւ մրցակիցն է եղել։

<sup>2</sup> Կրիս-բերդը Կոչէքթ բերդի գէմ ու գէմ է, լեռն աերին փեշերին մի բարձռունքի վրայ, ունի միջնաբերդ, ամբոցներ, գղեակ եւ բարձր դիրք։ Կործանուած են որմերը, չէնքերը, մերկ պատերը բարձր կանգնած են։ Շէնքի հարաւ-աթեւտելան պատերը զննում են Ճորոխին. հիւսիսարեւտեան որմերը եւ չէնքերը լեռների ստորոտի վերջին բարձռունքներին են յառած։

<sup>3</sup> Գորդ-քիլիս պարզ թբքական թարդմանութիւնն է — Զորս տաճարներ, որոնք գտնուում են, Լազուանի գիմաց, իրար մատ, սրբատաշ կարծր քարերով, ճարտարապետական ընտիր ոճով եւ քանդակներով։ Միջնադարեան կառուց յացնուած է, հիւսիսարեւտեան որմերը ու գէնքերը լեռների ստորոտի վերջին բարձռունքներին հէմք ունի։

<sup>4</sup> Կիսկիմ, Կիցկիմ, Կիցկա, Կեսիշիմ անուններով շատ ժամանակներից յացնանի է այս բերդը։ Ըստ Սանդալեանի նոյն խակ Խառը-Ուրարտական ընդհարութեան արձանագույն մէջ անցած է այս անունը։ Կիսկիմը եղել է Մամիկոննեանների բերդը եւ երկար ժամանակ իւնիւ է գաւառին։ Թորդում մէջ կայ նոյնակն Քսիանձոր առուակ եւ գեղ, այնպէս է որ այս անունը շատ գործածուած է եւ նշանակութեանն ըպարզուած չէ։

<sup>5</sup> Իրիս-բերդից մի կիլոմետր հիւսիսի Ճորոխի ճախ ափին կանգնած է Կոչէթի աւերակները, բերդի պարիսպները եւ կործանուած գղեակները։ Կոչէթի ամբոցը ցոյց է տալիս, որ միեւնոյն նախարաբը իրար մօտ շննել էր տալիս ամրոց-բերդ, գանձարան, կանանց, մանկանց, որոնք իրար համար համար ներքին կապով էին միացած։ Կոչէթի իրար համար աւելի բարձրութեան Աշմուշէն լեռների ստորոտում ունի երբորդ եւ աւելի բարձր ամրոց-բերդը։ որն հակում է Կոչէթի եւ Իրիսի բերդերին։

<sup>6</sup> Ճարշիշ, Կառավարտական անունը Էրսիկ է. բայց ժողովուրդը կանչում է Ճարշիշ, Կարմիկիցի եւ Հնուացի Ճայերը այդ գեղն անուանում են Ֆէրշիլ։ Երեւում է, որ թիւն ֆիի եւ ապա Հի է փոխուել սովորական կարգով։ Եթէ իսկապէս Թարշիլ է, ուրեմն այս գեղն եւ կապուում է Ճամբական իշխանութեան ափի Թարշիլների Ճամբական իշխանութեան համար գլխին հակում է Կիլիկիան ափի Թարշիլների կամ Թարշիլների համար անունը հակում է Յարոս, որով աւելի է հաստատում Ցայոց ալխարհի յարաբերական կապերը Համբակը և ալխարհի համբակ համբակ է Ակկագ-Շումմերների հէտ։

մանուն գեղերը, ախոռները, մացրաները, հայլաները, բերդերն ու վանքերը ուսողելով՝ կենդանացնում են դաշտերը: Այս բոլոր առուակները իջնում են Խախամ (Խարխամ), Մեղրեր, Բեղիկին եւ Հարկեւոր լեռներից, բոլորն էլ հարաւից-հիւսիս ուղղուած:

Կիսկիմի շրջանում ձորոխի երկու ափերի լեռներն էլ անտառապատ են, ունին խիտ եւ բարձր ծառեր-գերաններ: Այս հովտում նշանաւոր են Կուդրաշնի, Նիխախի, Օնակի, Կիսկիմի, Կալա-Բոյնու (բերդի կերման ճանապարհը) Հարշվի, Անիին եւ Գորչէքի բերդերը, որոնք կործանուած են ու աւերակ, բայց դրանց կիսաւեր եւ բարձր որմերը, պարիսպերը, գղեակների եւ ապարանքների մեծութիւնը, անառիկ գերքերը, որանց մօտերքը նոյն իսկ որմերի հիմքերին եղած աչքադարեան որմերը կենդանի վկայ են Կիսկիմի անցեալ փառքին: Բազմաթիւ են վանքերը, տաճարները, որոց իւրաքանչիւրը իր յատուկ ոճն ու ճարտարապետութիւնն ունին:

Կիսկիմի բնակչութիւնը նախնական եւ բնիկ է, իւլամն ընդունած եւ թուրք լեզուն իւրացրած. Սելջուկ կամ թաթար ցեղի բնակութիւն երբէք չի ունեցել: Ինչ որ կատարել էին Լալա եւ Արքի փաշաները, նոյնը շարունակուել է նոյնպէս Կիսկիմում եւ միւս գաւառներում: Կլիման այնքան նպաստաւոր եւ հողն այնքան առատ է, որ երկրագործութիւնն ու պարտէզպանութիւնը, այդործութիւնն ու բանջարաբուծութիւնը կարելի է հասցնել շատ բարձր աստիճանների, բայց չնորհիւ սոսկալի մտաւոր խաւարին՝ ետ են մնացած ինչպէս արդիւնաբերութիւնը նոյնպէս եւ արդիւնագործութիւնը: Բնականապէս երկիրը տալիս է այնքան պտուղ եւ այդպողի չորացրածը այնքան ապրուած է տալիս, որ բնակչութիւնը այլեւս ուրիշ հասոյթիւր ձեռք բերելու չի տքնում:

Հարշվի դաշտերը տալիս են ընտիր բրինձ, ջուրն այնքան առատ է, հողն այնպէս պարարտ եւ արդիւնաբեր, բայց չեն տքնում ընդարձակել գործը: Հարաշալի ծխախոտ է բերում Կուդրաշնի եւ Տանձոտի բարձուքը, բայց այնքան քիչ են ցանում, որ արտահանութեան կարիք չի լինում:

Կրօնափոխութիւնը, լեզուի փոփոխութիւնը Տայեցի կալուածատէր իշխանի համար տարագի նման է եղել, հետեւել է իշ-

խոզներին, բայց ո՛չ մի կրօն այնտեղ հիմունք չէ գտել. նա միմիայն հպատակութեան ձեւ է, ուրիշ ոչինչ: Կրօնական համոզումները եւ հաւատալիքները չեն քարացել կամ ամրացել կիսկիմում, այլ ծիսականութեան ձեւեր են դարձել: Այսօրուան խալամացած եւ թրքախօս ժողովուրդը աւելի ջրապաշտ եւ արեւապաշտ ժողովուրդ է, աւելի մեծ յարգանք է տալիս որանց պարարտացրած եւ կենդանացրած հողին, քան թէ Ղուրանի պատուիրաններին:

Փահլաւ, Բագրատումի, Կամսարական, Մամկոնեան եւ բոլոր իշխանական տները տքնում էին ժողովրդին անպայման քրիստոնէցնել, նրանց գաղափարական քրիստոնէցնել, ար կարողանան Հոռվմէական կալուածատիրական օրէնքներն ու կարգերը գործադրել, բայց բնակչութիւնը հակառակ էր հոռմէական կալուածատիրական բոլոր կարգերին. Ճգտում էր ունենալ պարսկական զրագաշտական կրօնը, քանի որ վերջինս գեղացու - երկրամշակի հողի վրայ ունեցած իրաւունքներն էր պաշտպանում եւ ստիպում էր իշխանութեանը հողից միմիայն մի տասներորդը պետական հարկ վերցնել եւ մնացեալը, որպէս անբունաբարելի իրաւունքը՝ յանձնել հողագործին: Հողագործ-աշխատաւոր բնակչութիւնը Սաւալանի մոգերին եւ Զրադաշտի վարդապետութեան աւելի մեծ հոգով էր փարում, քան թէ Հելլէն-Հոռմէական քրիստոնէութեան, որը իրա հողի եւ արդիւնաբերութեան իրաւունքը չէր պաշտպանում:

Իսլամի՝ գեղական ազգաբնակութեան մէջ տարածուելուն աւելի նպաստել է Ղուրանի աշարը (տասնորդական հարկը), քանի թէ Մահմէդի խոստացած դրախտի մշնջենական խրախճանքը: Իսլամն էլ այնքան մոլորդ էր, արմատներ չէր տարածած ժողովրդի սրտումն, որ միշտ իսլամի Խալիֆի-Ալլահի չքի դէմ մաքանել ու պայքարել են Ճորոխի աւազանի Բէղերն ու Ասսիները (ապստամբ) հողագործի հետ:

Կիսկիմի հովիտը հնումը բաժնուած է եղել իշխանական տների մէջ, այսուել իրենց ամրոցները, գանձարանները եւ կանանցները ունեցել են բոլոր նախարարական տները, բայց գլխաւորապէս այստեղ տարածուած էին Պահլաւնեանները եւ մեծ կալուածներ սրանք ունէին:


Ապա Բաղրատունիները Ուղթիքը ձեռք բերլուց յետոյ, Կիսկիմումն էլ կալուածներ դնեցին:

Հայութիւնը այնքան հալածանքների եւ կոտորածների ենթարկուելուց յետոյ, այնքան բոնի իսլամացումներից յետոյ, վերջին պատերազմի սկզբին դարձեալ քանուչորս Հայ գիւղեր գոյութիւն ունէին: Խոտորջուրի իր եօթն թաղերով, Սպեր-կենդրոնաւան, Կարմրիկ, Վ. եւ Ս. Փրիկեներ, Նիխախ, Կուդրաշէն, Խամբանոր, Կաղմխուտ, Ծետկոնց, Մոխրկուտ Վ. եւ Ս., Կարան, Բաղի, Թորոսինց, Բաղդասարենց եւ Փրտիկներ:

Անհիմական:

ԱՏՐՊԵՏ

(Տարուանակելի):



## ՍԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Ըստարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի. Նոր Շքան. Գ. Տարի: Կազմելին Թ. Ազատեան - Մ. Չունածեան: Կ. Պոլիս 1927: Տպագրութիւն «Կիւթէնպէրկ»: Գին՝ 200 դրուց, արտասահման՝ 1.50 տուար:

Եկտի-Գուլէի Ազգին Տան՝ «Ընդարձակ Տարեցոյցը», մասնաւորապէս վերջին տարիներուս տեսակ մը ժամագրավայրն հանդիսացած է հայ մաքի ու գրչի լաւագոյն հոյլի մը: Հեռու լոկ Ս. Փրկիչ Հիւանդանոցի նեղ շրջանակին մէջ սահմանափակուած ըլլալէ՝ ան իր 448 էջոց պատկառելի հատորովը համայնապատկեր մը կ'ընծայէ գրեթէ ամբողջ Հայութեան ու զանազան հայ Գաղութներու ներքին կեանքին ու ընթացիկ վկանակի մասին:

Հոն մի առ մի դասաւորուած են մատենագրական, ուսումնասիրական, բանաստեղծական, օրագրական, կենսագրական, բժշկական, օրէնսգիտական, վիճակագրական, տեղագրական եւն եւն բազմապիսի հիւթեղ ու մշակուած յօդուածներ: Իբրեւ օրինակ՝ յիշենք քանի մը հատդուածնենք. Յակոբ Օշական՝ «Մատենագրութեան համար (Ղաղար Փարպեցի)», էջ 29—46. Համաստեղ՝ «Փեսայ Օվան», (էջ 47—52), Յակոբ Մնձուրի՝ «Քոյրը», (էջ 65—69), Տիկ. Հայկանոյշ Մառը՝ «Խենդի սէր», (էջ 72—76), Թ. Աղատեան՝ «Անվերջանալի Տարին», (Եղիա Տէմբրձիպաշեան), էջ 84—92, Հ. Վ. Հացունի՝ «Գնութեան յարկերը Հայաստանի մէջ» (էջ 137

—143), Լութֆիկ Գույումճեան՝ «Ընդհանուր տեսութիւն թուրքիոյ արդի օրէնքներուն վրայ» (էջ 313—322): Տեղագրական բաժնէն՝ Յովակիմ քհյ. Բարսեղեան՝ «Պարսկահայ Գաղութը», (էջ 255—263), «Հայերը Ռումանիոյ մէջ» (էջ 346—355), Ա. Ամրիխանեան՝ «Քալիֆորնիոյ Հայ Գաղութը» (էջ 356—357), «Գանատահայ Գաղութը» (էջ 358—361), «Զուիցերահայ Գաղութը» (էջ 362—366) եւն: Ճոխ է Տարեցոյցին գեղարու եստական մասը, ուր Հանդ Ասատուր կու տայ «Արեւելեան թատրոն»ի 1866—1874 շրջանի պատկերը՝ իր շահեկան ուսումնասիրութիւնը զարդարելով բազմաթիւ հայ գերասան-գերասանուհիներով (էջ 170—215), Ակպիկ՝ «Աղջկան մը», (էջ 216—217), Հրանդ Ալեանաք՝ «Ակարչական նոր հոսանքները» (էջ 219—233), Ա. «Տաղանդաւոր մանրանկարիչ մը», (էջ 238—242), Դկար. Ալահվերտի Որդի՝ «Սիրու», (բժշկական), էջ 265—268, Դկար. Մ. Գալֆաեան՝ «Հին ու արդի Ատամաբուժութիւնը եւ ժողովուրդը», (էջ 269—273), Դկար. Վ. Թորգոմեան՝ «Ս. Փրկչեան Աղդային Հիւանդանոցի Բժիշկները» (1866—1888), էջ 274—283 եւն:

Առանձին ամփոփ բաժին մը նուիրուած է Փոքր-Ասիոյ ներքին գաւառներու մէջ գտնուող Հայութեան մասին (էջ 337—346): Գունագեղ փունջ մըն ալ հայ ժողովրդական երգերու՝ Մշց (էջ 107 եւ 169), Սեբաստիոյ (էջ 109—111 եւ 168), Ակնայ (էջ 112—114) եւ Վանայ (էջ 167—168) բարբառով՝ սկուած է հոն իրեն առանձնայատուկ հաճելի բոյրը: Համառօտ տեսութիւն մը կը պարզէ Եկտի-Գուլէի Գթութեան Յարկին ներկայ վիճակը (էջ 394—414): Վերջապէս՝ յատուկ բաժին մը կը խօսի անցնող տարուան ընթացքին անհետացող հայ գէմքերու վրայ (էջ 427—437): — Աւելի քան 110 լուսատիպ պատկերներ յօդուածագիր եւ ուրիշ անձերու, տեղերու, շնչերու եւ այլ իրերու՝ կենդանի ու կատարեալ ամբողջութիւն մը կու տան բովանդակ գործին:

Կը մաղթենք որ Ս. Փ. Աղդային Հիւանդանոցը, որ 95 տարիներէ ի վեր ամբողջ Աղջկին տաք գուգուրանքին առարկայ եղած է այսուհետեւ ալ ունենայ իր միշտ նախորդ տարիները գերազանցող ստուար ու ճոխ բովանդակութեամբ օժտուած Տարեցոյցները: Հ. Եֆրեմ Պողոսիս անութեան յարկերը Հայաստանի մէջ (էջ 137

